ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պետական պահպանության ծառայությունը ,որը գտնվում է ք. Երևան Պռոշյան փ. 1-ին փակուղի 20 հասցում,ստորև ներկայացնում է ՀՀ-ՊՊԾ-ՄԱԾՁԲ-1/5 ծածկագրով ՄԱ ընթացակարգի արդյունքում 20.02.2018թ. կնքված N ՀՀ-ՊՊԾ-ՄԱԾՁԲ-1/5 գնման Պայմանագրում(այսուհետև՝ Պայմանագիր)2018թ.-ի օգոստոսի 21-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն)վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Փոփոխությունն իրականացվել է հաշվի առնելով Պատվիրատուի և Վաճառողի միջև կնքված համաձայնագիրը:

Փոփոխության նկարագրություն և հիմավորում: Հիմք ընդունելով 20.02.2018թ. կնքված ՀՀ-ՊՊԾ-ՄԱԾՁԲ-1/5 պայմանագրի 7.5 կետը ,ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետը կողմերի միջև կնքվել է համաձայնագիր ,որով նվազեցվել է պայմանագրի գումարը և հաստատվել է վճարման ժամանակացույցը նոր խմբագրությամբ:

Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արհեստական փոփոխությունների շարքին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Կարեն Գասպարյանին:

Հեռախոս՝ 010 – 562944

Էլ. Փոստ՝ karen-gasparyan89@mail.ru

Պատվիրատու՝ ՀՀ պետական պահպանության ծառայություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

«20» «ՓԵՏՐՎԱՐԻ» 2018Թ. ԿՆՔՎԱԾ ՀՀ ՊՊԾ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ

N « ՀՀ-ՊՊԾ-ՄԱԾՁԲ-1/5» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան «21» « 08 »2018թ.

ՀՀ Պետական պահպանության ծառայությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության Պետական պահպանության ծառայության **պետ Գ. Հայրապետովի**, որը գործում է <<Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի և Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և ***«Տոյոտա-Երևան» ՍՊԸ***-ն, ի դեմս տնօրեն ***Վ. Գզրարյանի***, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով կողմերի միջև «20» «փետրվարի» 2018թ. կնքված **« ՀՀ-ՊՊԾ-ՄԱԾՁԲ-1/5»** պայմանագրի 7.5 կետը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետը կողմերը կնքեցին սույն համաձայնագիրը :

1.2 Կողմերը համաձայնության եկան պայմանագրի գումարը նվազեցնել 5800000 /հինգ միլիոն ութ հարյուր հազար / ՀՀ դրամով և սույն Պայմանագրի գումարը սահմանել առավելագույնը 4700000/չորս միլիոն յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ, որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում՝ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները:

1.3 Պայմանագրի վճարման ժամանակացույցը (Հավելված 3) հաստատել համապատասխան փոփոխություններով նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 2 էջից, համաձայնագրի հավելվածը բաղկացած է 1 էջից և հանդիսանում է վերջինիս բաղկացուցիչ մասը: Համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական պահպանության ծառայություն	«Տոյոտա Երևան» ՍՊԸ
ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20	ք. Երևան Ծովակալ Իսակովի 22
ՀՀ ֆինանսների նախարարության	ՀՎՀՀ 01557589
աշխատակազմի գործառնական վարչություն	«Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/հ 900011004497	Կենտրոնական մասնաճյուղ
ՀՎՀՀ 00006796	Հ/հ 1570003667300100
Պետ՝ Գ. Եղրապետով	Գլխավոր տնօրեն՝ Ս. Գզարյան

Հավելված 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀդրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	« Toyota » մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում	500000	1000000	1200000	1700000	2000000	2400000	2600000	3000000	3400000	3800000	4300000	4700000	**4700000**
Ընդամենը							**4700000 /չորս միլիոն յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ**							

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պետական պահպանության ծառայություն

ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20

ՀՀ ֆինանսների նախարարության

աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/հ 900011004497

ՀՎՀՀ 00006796

Պետ՝ Գ. Հայրապետով

ԿԱՏԱՐՈՂ

«Տոյոտա Երևան» ՍՊԸ

ք. Երևան Ծովակալ Իսակովի 22

ՀՎՀՀ 01557589

«Ամերիաբանկ»ՓԲԸ

Կենտրոնական մասնաճյուղ

Հ/հ 1570003667300100

Գլխավոր տնօրեն Վ. Գրիգորյան